05.07.2025թ.

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Հարգելի հայրենակիցներ,

Սևան համայնքի բնակիչներ

Շնորհավորում եմ բոլորիս մեր պետության մայր օրենքի՝ Սահմանադրության օրվա առթիվ, որով ամրագրվեց մեր պետականության ինքնիշխանությունը:

30 տարի առաջ ընդունված Սահմանադրության դերն ու նշանակությունն անգնահատելի են ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետության կայացման ճանապարհին:

Հավատարիմ մնալով ժողովրդավարական սկզբունքներին, հաշվի առնելով ազգային առանձնահատկությունները, աչքի առաջ ունենալով աշխարհի փորձը՝ 1995թ.-ի հուլիսի 5-ին, համաժողովրդական հանրաքվեի արդյունքներով հայ ժողովուրդը «Այո» ասաց մեր երկրի գլխավոր օրենքին:

Ընդունելով Սահմանադրությունը՝ մեզանից յուրաքանչյուրը երեքտասնամյակ առաջ ստանձնեց մեծագույն պատասխանատվություն պետություն ունենալու և այն կայացնելու համար:

Մայր օրենքն ամենից առաջ յուրաքանչյուր քաղաքացու հիմնարար իրավունքներն ու ազատություններն ամրագրող փաստաթուղթ է, մարդակենտրոն հռչակագիր, որի կենսունակության համար պատասխանատու ենք բոլորս:

Սահմանադրությամբ ամրագրված արժեքները կարող են դառնալ իրողություն, եթե յուրաքանչյուրս մեր տեղում, մեր աշխատանքով և լիազորությունների շրջանակներում նպաստենք դրանց կյանքի կոչմանը և միաժամանակ կրենք այդ արժեքները: Ավելի ուժեղ երկիր ու կայացած համայնք ունենալու համար պետք է առավել պատասխանատու և նախաձեռնող լինենք՝ հարգելով այն օրենքը, որով սահմանված են շատ չոփորոշիչներ, որը նաև ներդաշնակ հասարակություն ստեղծելու կարևոր արժեքներից մեկն է:

Կայացած ու ինքնիշխան պետության վավերագրերն են նաև ՀՀ պետական դրոշը, զինանշանը և օրհներգը, որոնք ամբողջացնում են մեր երկրի դիմագիծը, որոնցով ներկայանում ենք նաև աշխարհին:

Հուլիսի 5-ին նշում ենք պետական խորհրդանշանների օրը, որոնք հայ ժողովրդի պատմության և պետականության, մշակութային արժեքների վավերագրերն են ու այցեքարտերը:

Մեր աշխատանքով, մեր կեցվածքով, ուժեղ պետություն ստեղծելով մեր պետական խորհրդանշանները դարձնենք ներկայանալի ու հարգանքի արժանի:

Սիրելի հայրենակիցներ, Սևան համայնքի բնակիչներ

Իմ, համայնքի ղեկավարի աշխատակազմի, վարչական ղեկավարների և համայնքի ավագանու անունից շնորհավորում եմ բոլորիս պետական այս կարևորագույն տոնի առթիվ:

Մենք միասին, համատեղ ջանքերով պետք է կառուցենք իրավական երկիր՝ քաղաքացու և իշխանության փոխադարձ վստահության, հարգանքի, ներքին համերաշխության և կայունության պայմաններում՝ համատեղելով մեր ջանքերն ու ուժը, միավորելով հզոր ու կայացած պետություն ունենալու մեր ձգտումներն ու նպատակները:

Մաղթում եմ խաղաղություն մեր երկրին, բարեկեցություն՝ մեր ժողովրդին, ամուր կամք և նպատակասլացություն՝ մեր հավաքական երազանքների և նպատակների իրականացման ճանապարհին: